ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2021 թվականի N 32-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «144-01/Վ-021», ապրիլի 21-ի «151-01/Վ-021», «151Ա-01/Վ-021», «151Բ-01/Վ-021», «151Գ-01/Վ-021», ապրիլի 22-ի «150-02/Վ-021» և ապրիլի 30-ի «175-01/Վ-021» ու «175Ա-01/Վ-021» գրությունները ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1.Համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 2/84 հասցեի 82.9 քմ ընդհանուր մակերեսով տնտեսական շինությունն ու ավտոտնակը և դրանց զբաղեցրած 145.32 քմ մակերեսով հողամասը (վկայական N 2711164, տրված 2010 թվականի օգոստոսի 11-ին, կադաստրային համարը՝ 07-003-0025-0094, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ հասարակական կառուցապատման), Օղակաձև փողոց 50 շենքի 17.41 քմ մակերեսով 1 բնակարանը (վկայական N03112017-07-0139), 22.12 քմ

մակերեսով 90 բնակարանը (վկայական N 03112017-07-0104), 16.62 քմ մակերեսով 80 բնակարանը (վկայական N 03112017-07-0119), 14.01 քմ մակերեսով 65 բնակարանը (վկայական N 17032017-07-0063) և 16.5 քմ մակերեսով 69 բնակարանը (վկայական N 03112017-07-0056), 2-րդ փողոց 49 շենքի 13.29 քմ մակերեսով 35 բնակարանն (վկայական N 01042014-07-0016) ու «ՊՏ-165 Մ» մակնիշի խոտհավաքիչ մամլիչը օտարելու համար:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ
2. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ
3. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ
4. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ
5. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀԱՅԿ ԵՂՅԱՆ